

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ



Հինգշաբթի, 1 Օգոստոս.– Զուգեցերիոյ ազգային օրուան առիթով տրուած ընդունելութեան Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան կողմէ ներկայ գըտնուեցաւ Դիւանապետ՝ Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Երեքշաբթի, 20 Օգոստոս.– Երուսաղէմի Ասորւոց Եպիսկոպոս՝ Տ. Անթիմոս Ճաք Յակոբ, ընկերակցութեամբ իր զոյգ միաբաններու՝ այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Երուսաղէմի Հայ Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեանի հետ: Հանդիպման ընթացքին Ասորւոց Եպիսկոպոսը Եպիսկոպոսական ասա մը նուիրեց Նուրհան Պատրիարք Սրբազան Հօրը:

Հանդիպմանը ներկայ էին նաեւ Սուրբ Աթոռոյս Կալուածոց տեսուչ՝ Տ. Կորին Եպս. Բաղդասարեան, Աւագ Թարգման՝ Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան եւ Դիւանապետ՝ Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Երկուշաբթի, 16 Սեպտեմբեր.– Իսրայէլի մէջ ԱՄՆ դեսպանատան «Պաղեստինեան գործերու վարչութեան» նորանշանակ ղեկավար՝ Տիար Հէնս Ուեյսել, ընկերակցութեամբ փրոթոքոլի պատասխանատու՝ Տիար Հարալդ Օլսընի եւ քաղաքագէտ՝ Տիկին Ռոզալին Անթարի, կատարեց իր առաջին պաշտօնական այցը Երուսաղէմի Հայոց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Հանդիպման ընթացքին Նորին Ամենապատուութիւնը շնորհաւորեց Տիար Ուեյսելի իր պաշտօնի նշանակման առիթով եւ յաջողութիւն մաղթեց:

Հանդիպմանը ներկայ էր նաեւ Սուրբ Աթոռոյս Դիւանապետ՝ Հոգեշնորհ Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Երեքշաբթի, 8 Հոկտեմբեր.– Սուրբ Յարութեան տաճարի նորանշանակ պատասխանատու ոստիկան՝ Տիար Անան Շանան, ընկերակցութեամբ տաճարին ծառայող ոստիկաններէն Տիար Մաթդ Ֆարահի՝ այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Հանդիպմանը ներկայ էին նաեւ Սուրբ Աթոռոյս Աւագ Թարգման՝ Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան եւ Դիւանապետ՝ Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Նոյն օրը, ժամը 11-ին, Արժանթինի ներկայացուցչութեան Պաղեստինեան գրասենեակի մեծաւոր՝ Տիար Մարթին Էռնեսթօ Լաֆֆորշ այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Հանդիպմանը ներկայ էին նաեւ Սուրբ Աթոռոյս Աւագ Թարգման՝ Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան եւ Դիւանապետ՝ Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Հինգշաբթի, 10 Հոկտեմբեր.– Առաւօտեան ժամը 11-ին, Իսրայէլի մէջ Ռուսիոյ դեսպան՝ Տիար Անատոլի Վիքթորով, ընկերակցութեամբ Ռուսիոյ դեսպանատան խորհրդական եւ քաղաքական բաժնի ղեկավար՝ Տիար Տիգրան Կոդբաշեանի եւ առաջին քարտուղար՝ Տիար Ֆէտըր Կէորգիի այցելեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Հանդիպմանը ներկայ էր նաեւ Դիւանապետի առժամեայ պաշտօնակատար՝ Տ. Սիոն Աբդ. Թաքուեան:

Ուրբաթ, 26 Հոկտեմբեր.– Երուսաղէմի մէջ Մեծ Բրիտանիոյ Ընդհանուր Հիւպատոս՝ Տիկին Տայան Քորներ իր պաշտօնավարութեան շրջանն աւարտելուն առիթով քաղաքէս մեկնելէն առաջ մնաք բարովի այցի եկաւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Հինգշաբթի, 31 Հոկտեմբեր.– Երուսաղէմի մէջ Սպանիոյ նորանշանակ ընդհանուր հիւպատոս՝ Տիար José Javier Gutiérrez Blanco-Navarrete այցելեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Հանդիպմանը ներկայ էին նաեւ Կալուածոց Տեսուչ՝ Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան եւ Դիւանապետի առժամեայ պաշտօնակատար՝ Տ. Սիրոն Աբղ. Թաքուշեան:

Երեքշաբթի, 12 Նոյեմբեր.– Երուսաղէմի եւ Մերձաւոր Արեւելքի Անկլիքան եկեղեցւոյ եպիսկոպոս՝ Գերաշնորհ Տ. Հուսամ Արք. Նաում քաղաքավարական այցելութիւն կատարեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Հանդիպմանը ներկայ էր նաեւ դիւանապետ՝ Տ. Աղան Վրդ. Գոգշեան:

Հանդիպման ընթացքին Անկլիքան եպիսկոպոսը Երուսաղէմի Հայ Պատրիարքին տեղեկացուց Քենթըրպրի Արքեպիսկոպոսի՝ Սուրբ Երկիր կատարուելիք այցի եւ այդ առթիւ կազմակերպչական աշխատանքներու մասին:

Հինգշաբթի, 14 Նոյեմբեր.– Երուսաղէմի մէջ Մեծ Բրիտանիոյ Ընդհանուր Հիւպատոս՝ Տիկին Տայան Քորների պաշտօնավարութեան շրջանն աւարտելուն առիթով տրուած ընդունելութեան Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցաւ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան, ընկերակցութեամբ Աւագ Թարգման՝ Տ. Վազգէն Վրդ. Ալէքեանի եւ Դիւանապետ՝ Տ. Աղան Վրդ. Գոգշեանի:

Երեքշաբթի, 19 Նոյեմբեր.– Քենթըրպրի արքեպիսկոպոս՝ Ժաւթին Ուէլչի, ընկերակցութեամբ Երուսաղէմի եւ Մերձաւոր Արեւելքի Անկլիքան եկեղեցւոյ եպիսկոպոս՝ Հուսամ Արք. Նաումի եւ եպիսկոպոսներու այցելեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատուի Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Հանդիպմանը ներկայ էր նաեւ դիւանապետ՝ Տ. Աղան Վրդ. Գոգշեան, որ եւ հանդիպումէն յետոյ Քենթըրպրի արքեպիսկոպոսին եւ պատուիրական առաջնորդեց Սրբոց Յակոբեանց Մայր Տաճար եւ տուաւ համապատասխան բացատրութիւններ:

Նոյն օրը երեկոյեան, Իսրայէլի Արտաքին գործոց նախարարութեան՝ քրիստոնեայ փոքրամասնութիւններու նորանշանակ պետ՝ Տիկին Տամի Պէն Խայիմ, ընկերակցութեամբ նոյն նախարարութեան բոլոր փոքրամասնութիւններու մեծաւոր՝ Տիկին Շուլի Տաւտովիչի, Իսրայէլի Ներքին գործոց նախարարութեան Քրիստոնեայ համայնքներու

բաժնի վարիչ՝ Տիար Սեզար Մարճիէի եւ նոյն վարչութեան բոլոր փոքրամասնութիւններու մեծաւոր՝ Տիար Էլյատ Սառխանի, իր պաշտօնը ստանձնելուն առիթով այցելեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատուի Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Հանդիպմանը ներկայ էին նաեւ Սուրբ Աթոռոյս Կալուածոց տեսուչ՝ Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան եւ Դիւանապետ՝ Տ. Աղան Վրդ. Գոգշեան:

Երեքշաբթի, 3 Դեկտեմբեր.– Հայաստանէն Սուրբ Երկիր ժամանած՝ Երեւանի պետական համալսարանի հայագիտական հետազօտութիւններու ինստիտուտի հայ-օսմանական առնչութիւններու բաժնի ղեկավար, արեւելագիտութեան ֆակուլտետի՝ թիւքագիտութեան ամպիոնի դոցենտ՝ Տիկին Լուսինէ Սահակեան այցելեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատուի Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Հանդիպման ընթացքին Տիկին Լուսինէ Սահակեան Նորին Ամենապատուութեան յաճնեց 2017 թուականէն ի վեր տարուած աշխատանքներու արդիւնքը՝ «Հայկական հարցի եւ Հայոց ցեղասպանութեան արխիւի տեղեկագիր մատեան, Երուսաղէմի Հայոց Պատրիարքարան» գրքի առաջին հատորը:

Շուրջ 1000 եւ աւելի էջերէ կազմուած սոյն հատորը լոյս ընծայուած է հեղինակներ՝ Լուսինէ Սահակեանի, Անի Սարգսեանի եւ Անի Ոսկանեանի անգնահատելի ջանքերով:

Հանդիպմանը ներկայ էին նաեւ Սուրբ Աթոռոյս Դիւանապետ՝ Հոգեշնորհ Տ. Աղան Վրդ. Գոգշեան եւ Սոչիէն Տիար Մարկոս Քէսեան:

Նոյն օրը, Իսրայէլի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Տիար Արման Յակոբեան այցելեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Հանդիպմանը ներկայ էր նաեւ Դիւանապետ՝ Տ. Աղան Վրդ. Գոգշեան:

Չորեքշաբթի, 11 Դեկտեմբեր.– Առաւօտեան ժամը 10-ին, Ամանորի եւ Սուրբ Ծննդեան տօներուն ընթացքին Սուրբ Երկրի Քրիստոնեայ Հոգեւոր Պետերը եւ ներկայացուցիչները մէկտեղուեցան Յունաց Պատրիարքարանին մէջ: Հանդիպման ընթացքին Հոգեւոր Պետերը խմբագրեցին Ամանորի եւ Սուրբ Ծննդեան հաղորդագրութիւնը:

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմ

մէ ներկայ գտնուեցաւ Դիւանապետ՝ Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

18-23 Դեկտեմբեր.– Յորդանանահայոց Պատրիարքական փոխանորդ Տ. Աւետիս Ծ. Վրդ. Իփրաճեանի հրաւերով եւ Երուսաղէմի Հայ Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեանի օրհնութեամբ եւ յանձնարարութեամբ Սուրբ Աթոռոյ Տնօրէն Ժողովի Ատենապետ՝ Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան Դեկտեմբեր 18-23 օրերուն այցելեց Յորդանանի Հաշիմական Թագաւորութիւն՝ հանդիպելու Ամմանի Տեղական խորհուրդի անդամներուն եւ ի մօտոյ ծանօթանալու համայնքի կրօնական եւ համայնքային խնդիրներուն:

Այցի ընթացքին Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան, ընկերակցութեամբ Յորդանանահայոց առաջնորդ եւ Պատրիարքական փոխանորդ՝ Տ. Աւետիս Ծ. Վրդ. Իփրաճեանի Ամմանի Յոյն-Կաթոլիկ Եկեղեցւոյ առաջնորդարանին մէջ մասնակցեցաւ Ամանորի եւ Սուրբ Ծննդեան տօներու առթիւ՝ ի պատիւ Յորդանանի քրիստոնէական համայնքներու հոգեւոր առաջնորդներու Յորդանանի Հաշիմական Թագաւորութեան վարչապետ՝ Մեծայարգ Տիար Ճաֆար Հասսանի կողմէ կազմակերպուած շնորհաւորական հանդիսութեան:

Երեքշաբթի, 23 Դեկտեմբեր.– Ամանորի եւ Սուրբ Ծննդեան տօներու առթիւ Երուսաղէմի մէջ Ֆրանսայի Ընդհանուր Հիւպատոս՝ Տիար Նիկոլաս Դասիանիդէսի կողմէ ի պատիւ Սուրբ Երկրի Պատրիարքներուն տրուած պաշտօնական ընթրիքին Ֆրանսական հիւպատոսարանին մէջ ներկայ գտնուեցաւ Երուսաղէմի Հայ Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ՝ Դիւանապետ՝ Տ. Աղան Վրդ. Գոգչեանի:

Ընթրիքին ներկայ էին նաեւ Յունաց եւ Լատինաց Պատրիարքները:

Ուրբաթ, 27 Դեկտեմբեր.– Կաթոլիկ եւ Բողոքական եկեղեցիներու Սուրբ Ծննդեան տօնին առթիւ, Սուրբ Երկրին մէջ սկսան շնորհաւորութիւնները:

Առաւօտեան ժամը 10:15-ին, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը հանդիսապետութեամբ

Երուսաղէմի Հայ Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեանի, շնորհաւորութեան գնաց Սուրբ Երկրի Լատին Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Փիերպատիսթա Արք. Փիցապալային եւ Միաբանութեան:

Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Պատրիարք շնորհաւորելով Լատին Ամենապատիւ Պատրիարքին՝ իր խօսքին մէջ ըսաւ. «Ամէն տարի Սուրբ Ծնունդին մեր աղօթքներով կը միանանք Ձեզ եւ մեր միւս քրիստոնէայ եղբայրներուն՝ խընդրելով նորածին Թագաւորէն որ մէկընդմիշտ վերացնէ ատելութիւնն ու թշնամանքն այս աշխարհէն եւ անգամ մը եւս մեր աշխարհին շնորհէ Իր Աստուածային խաղաղութիւնն ու սէրը, ինչպէս նաեւ աշխարհի առաջնորդներուն՝ Իր աստուածային իմաստութիւնը:

Կը մաղթեմ, որ այսօր մեր միասին անցուցած ժամանակը ոգեշնչէ մեզ՝ խորացնելու եղբայրական մեր կապերը, որոնք կը միաւորեն մեզ հաւատքով եւ կ'ամրացնեն մեր վճռականութիւնը՝ ըլլալու խաղաղութեան եւ սիրոյ քարոզիչ մեր Տիրոջ վկաները աշխարհի վրայ:

Սրբոց Յակոբեանց միաբանութեան եւ Հայ համայնքի անունէն կը շնորհաւորենք Ձեզ եւ Ձեր համայնքի անդամներու Ամանորը եւ Սուրբ Ծնունդը:

ՇՆՈՐՀԱԽՈՐ ԱՄԱՆՈՐ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՆԴ:

Ապա Լատին Ամենապատիւ Տ. Փիերպատիսթա Պատրիարք շնորհակալութիւն յայտնեց Սրբոց Յակոբեանց Միաբանութեան շնորհաւորական այցելութեան համար: Իր խօսքին մէջ Լատին Պատրիարք ըսաւ. «Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս մենք կը փափաքինք որ այն ըլլայ խաղաղութեան, ուրախութեան եւ յոյսի տարի: Մեզի յոյս պէտք է այս երկրին մէջ, որը նշանաւորուած է բռնութեամբ, ատելութեամբ, վիրաւորական արհամարհանքով ու վախով: Սուրբ Ծնունդը հնարաւորութիւն կու տայ մեզի մեր սրտերու մէջ տեղ բանալու Անոր համար, բացայայտելու որ Ինքն է մեր ճանապարհը, մեր տունը, մեր հացը, մեր յոյսը:

ՇՆՈՐՀԱԽՈՐ ԱՄԱՆՈՐ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՆԴ:

Պատրաստեց՝ ՆԵՐՍԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼՈՅԵԱՆ